Միքայել Նալբանդյան

Վազող ջրին

Իստակ ջուր վազուկ, արդյոք ի՞նչ կլիներ,
Որ քո ալիքներ տաներ իմ ցավեր,
Կամ ի՞նչ կլիներ, թե իմ վիշտ ու լաց
Ինչպես ծուխ օդում ցրվեին հանկարծ:

Կամ ինչո՞ւ համար ուրախությունը
Թռչում է շուտով, մընում է ցավը .
Թող քո ալիքներ ցնդեն իմ վշտեր,
Լվանան սիրտս թո՛ղ քո մասնիկներ:

Սիրտս խոցված է զանազան կողմից,
Արյուն ու շարավ կթափի երակից .
Լվա՛, մաքուր ջուր, սրբե՛ ինչպես հուր,
Թո՛ղ փայլի սիրտս, չըմնա մի մուր:

Դու սրրբեցիր ինձ՝ երբ որ ես ծնա,
Ես քո մեջ իստակ ձեռքով թաղվեցա .
Դու լվացող ես հոգու ու մարմնի,
Լվա՛ իմ սիրտս, թո՛ղ քեղ պես փայլի:

Թող մաքուր լինիմ, ինչպես դու սուրբ ես:
Թող ողջ աշխարհին երևիմ քեզ պես: